2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀՀ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ *ՀՀ ԱԳՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

Հայտի հաստատման ամսաթիվը՝ *ՄԱՐՏ 2026 թվական*

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը պետք է իրականացնի.

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում, որի նպատակն է արարողակարգային միջոցառումների պատշաճ կազմակերպումը, իսկ վերջնական արդյունքը՝ ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումների, ընթացակարգերի և ծիսակարգերի կազմակերպումն և իրականացումը:

Տվյալ ծրագրի թիրախն է արարողակարգային միջոցառումների և ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությանը վերապահված այլ գործառույթների համապարփակ իրականացումը՝ համաձայն միջազգայնորեն ընդունված կանոնների: Այս բյուջետային ծրագիրն ապահովում է կապը ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակ 17-ի հետ:

Իր հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, 2027 - 2029թթ. ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության նախագահի, ՀՀ փոխվարչապետների, ԱԳ նախարարի ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի և նրանց մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական միջոցառումների, օտարերկրյա պետությունների, կառավարությունների, արտաքին հարաբերությունների գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների ու նրանց ուղեկցող անձանց Հայաստանի Հանրապետություն այցերի պատշաճ մակարդակով նախապատրաստումն ու իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների հետ դիվանագիտական արարողակարգային գրագրության իրականացումը, աշխատանքային և արարողակարգային հանդիպումների կազմակերպումը, դիվանագիտական անձնակազմի անձեռնմխելիության և արտոնությունների հետ կապված հարցերի կարգավորումը, օտարերկրյա և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ տարվող արարողակարգային աշխատանքները, դրանց ղեկավարների հավատարմագրման և պարտականությունների ստանձման գործընթացները:

Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հանրապետության նախագահի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների մասնակցությամբ պետական միջոցառումների (ապրիլի 24, մայիսի 9, սեպտեմբերի 21 և այլն) կազմակերպումն և անցկացումն ըստ արարողակարգի:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Գերակա ծախսային ուղղությունները և միջոցառումները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար (ըստ գերակայությունների նվազման)	Լուծման կամ կարգավորման ենթակա խնդիրները
Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում	ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումների, ընթացակարգերի և ծիսակարգերի կազմակերպում և իրականացում, տոկոս

3. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Բազային բյուջեի գնահատում

ԾՐԱԳԻՐ 1178

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում

Ծրագրի շրջանակում ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունն իրականացնում է արարողակարգային միջոցառումների պատշաճ կազմակերպում:

Միջոցառում 11001 – Պետական արարողակարգային միջոցառումների իրականացում

Միջոցառման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացման համար կպահանջվի. 2027 թվականի համար՝ 426,563.0 հազ դրամ,

2028 թվականի համար՝ 426,822.1 հազ դրամ և 2029 թվականի համար՝ 431,674.7 հազ դրամ բյուջետային հատկացումներ:

3.2. Նոր նախաձեռնություններ

ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը նոր նախաձեռնություններ չունի:

3.3. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորու-թյունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1178	11001	**ՀՀ - ում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում**	Միասնական արարողակարգային գործելակերպի և ընթացակարգի ապահովում, արարողակարգային կանոնների միասնական կիրառում ՀՀ-ում և միջազգային հարաբերություններում:	Արարողակարգային միջոցառումների թիվը, ծախսերի ծավալը	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ

					կետ, 17-րդ ենթակետ Պետական արարողակարգի մասին ՀՀ օրենք:

3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

Ներկայացվում են հավելված 17-ում՝ բյուջետային հայտի տրամադրման փուլում:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը ոչ բյուջետային աղբյուրներից եկամուտներ չունի:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայության համար կիրառելի չէ:

6. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացվում է Հավելված 8-ում՝ նոր նախաձեռնությունների ներկայացման փուլում:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ներկայացվում է հավելված 10-ում՝ բյուջետային հայտի ներկայացման փուլում:

10. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ /ԱՆՁՆԱԳԻՐ/

Ներկայացվում է կից հավելված 13-ում՝ բյուջետային հայտի ներկայացման փուլում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ